«Հաստատում եմ»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,
ոստիկանության գեներալ-լեյտենանտ
_____ Մ.Բաբայան
«22» 01 2021թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի՝ Նելլի Արմենի Աշրաֆյանի՝ «Քրեական պատասխանատվությունից ազատվելու տեսական և գործնական հիմնախնդիրները (տուժողի հետ հաշտվելու հիմքով)» թեմայով ԺԲ. 00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնը՝ մասնակցությամբ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ.Թ.Գրիգորյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Մ.Մարկոսյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Հ.Մ.Խաչատրյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Դ.Ա.Թումասյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Դ.Ռ.Հունանյանի քննարկեց Նելլի Արմենի Աշրաֆյանի՝ «Քրեական պատասխանատվությունից ազատվելու տեսական և գործնական հիմնախնդիրները (տուժողի հետ հաշտվելու հիմքով)» վերտառությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012թ.-ի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի ներածության մեջ որպես ծրագրվող բարեփոխումների համակարգային մոտեցումն

ապահովող առաջնային ուղղություն նշվել է նյութական և դատավարական մի շարք օրենքների ընդունումը կամ կատարելագործումը՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության փոփոխված Սահմանադրության և միջազգային լավագույն փորձի վրա: Ըստ նշված ծրագրի՝ Հայաստանի Հանրապետության ապագա քրեական օրենսգրքում անհրաժեշտ է նախատեսել քրեաիրավական հարկադրանքը տնտեսելուն ուղղված այլ լուծումներ, ուսումնասիրել քրեական պատասխանատվությանն այլընտրանք հանդիսացող միջոցների, մասնավորապես, մեդիացիայի նախատեսման հնարավորությունը: 2020թ.-ի դեկտեմբերի 9-ին ՀՀ Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունել է ՀՀ քրեական օրենսգրքի նոր նախագիծը, որտեղ փոփոխության են ենթարկվում նաև քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը: Այս համատեքստում Ա. Աշրաֆյանի ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում, քանի որ դրանում արտահայտված մի շարք դիրքորոշումներ և մոտեցումներ կարող են հայեցակարգային նշանակություն ունենալ քրեական պատասխանատվությունից ազատելուն վերաբերող դրույթների մշակման համար:

Ատենախոսության ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ ատենախոսը հաջողությամբ լուծել է հետազոտության խնդիրները, ինչի շնորհիվ իրականացվել է հետազոտության նպատակը, այն է՝ տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի համալիր հետազոտությանը քրեական օրենսդրության հումանիզացման և խրախուսման մեթոդի կիրառման հնարավորություններն ընդլայնելու համատեքստում՝ որպես հարաբերությունների քրեաիրավական կարգավորման համար ավանդական իմպերատիվ մեթոդի այլընտրանք: *Հետազոտության ճիշտ առաջադրված նպատակն ու խնդիրները կանխորոշել են ատենախոսության կուռ տրամաբանական կառուցվածքը:*

Հետազոտությունը սկսվում է քրեական պատասխանատվությունից ազատելու տեսական հարցադրումներից և օրենսդրական զարգացումը ներկայացնելուց, որի շրջանակներում ատենախոսը նախ ներկայացնում է տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի իրավական կարգավորման պատմատեսական զարգացման հիմնախնդիրները և հաշտեցման ինստիտուտն արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունում:

Բավականին ուշագրավ է ատենախոսի մոտեցումն այս ինստիտուտն արտասահմանյան երկրերի քրեական օրենսդրությամբ մեկնաբանելու մոտեցումները:

Ատենախոսության երկրորդ գլխում հանգամանորեն ներկայացվում է քրեական պատասխանատվությունից ազատվելու ինստիտուտի խրախուսական բնույթը, մասնավորապես ներկայացնելով խրախուսումը քրեական իրավունքում, դրական վարքագծի քրեաիրավական խթանումը, խրախուսման՝ որպես դրական խթանի տեսական հիմնավորումները, քրեաիրավական խրախուսական նորմերը և դրանցում կողմերի հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի ամրագրումը: Ներկայացված վերլուծության համատեքստում վերահիմաստավորվում է տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը և ներկայացվում են դրա կիրառման հեռանկարները:

Ատենախոսության երրորդ գլուխում վերլուծության է ենթարկվում տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու էությունն ու նշանակությունը, մասնավորապես ներկայացվում է հաշտեցման տեղը և դերը քրեական իրավունքում, տուժողի հետ հաշտության քրեաիրավական բնույթը և դրա տեղը քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերի շարքում, ինչպես նաև տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերն ու պայմանները: Տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերն ու պայմաններն ուսումնասիրելու արդյունքում հիմնավորված պետք է համարել ատենախոսի առաջարկն առ այն, որ ճիշտ կլինի տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը հնարավոր համարել նաև միջին ծանրության հանցանք կատարած անձանց նկատմամբ, որն արդեն նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում: Այս հարցի առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի երկու որոշումների վերլուծությունը ձևավորում է սույն ատենախոսության գիտագործնական և տեսագործնական բազան:

Եզրակացության մեջ ատենախոսն ամփոփում է կատարված հետազոտության արդյունքները, մատնանշում ատենախոսության առավել նշանակալի դրույթները, շարադրում է հիմնական հետևություններն ու առաջարկներ:

Միանշանակ դրական գնահատականի են արժանի ատենախոսի կողմից պաշտպանության ներկայացվող դրույթները, որոնցով ապահովվել է աշխատանքի գիտական նորույթն անգամ այն պայմաններում, որ համանման թեմայով վերջին տարիներին եղել է երկու ատենախոսությունների պաշտպանություն՝ համապատասխանաբար 2012թ.-ին և 2014թ.-ին:

Հատկապես ուշագրավ է պաշտպանության ներկայացվող առաջին դրույթը, որով առաջարկվում է տուժողի հետ հաշտվելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելը դիտարկել որպես խրախուսման մեթոդի իրականացման ձևերից մեկը:

Լիովին հիմնավորված պետք է համարել նաև պաշտպանության ներկայացվող չորրորդ դրույթում արված առաջարկն առ այն, որ քրեաիրավական խրախուսումն իրավական ներգործության բավականաչափ արդյունավետ մեթոդ է, որը կիրառվում է այն անձանց հանրօգուտ վարքագիծը խթանելու համար, որոնք հայտնվել են քրեական օրենքի գործողության տիրույթում:

Ատենախոսի տեսական դատողությունների և եզրահանգումների հիմնավորվածությունն ապահովվել է կատարված հետազոտության մեթոդաբանական բազայով, գրականության աղբյուրների մեծ քանակության օգտագործմամբ: Այս ամենը թույլ է տալիս ատենախոսի հետևությունները և առաջարկությունները համարել գիտականորեն հիմնավորված և հավաստի:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածները արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները և չեն հակասում դրան:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Ատենախոսության մեջ հեղինակը կիրառում է «տուժողի հետ հաշտվել» (էջեր 21, 26, 63 և այլն), «տուժողի հետ հաշտություն» (էջեր 22, 26, 71, 107 և այլն) և «տուժողի հետ հաշտեցում» (էջեր 20, 21 և այլն) եզրույթները, որոնցից գործող քրեական օրենսգիրքն օգտագործում է «տուժողի հետ հաշտվել», նախագիծը՝ «տուժողի հետ հաշտություն» եզրույթները, իսկ «տուժողի հետ հաշտեցում» եզրույթն առհասարակ չի կիրառվում: Սակայն, հեղինակն այս եզրույթները միախառնում է և ներկայացնում է չտարանջատված և չմեկնաբանված ձևաչափով: Ցանկալի կլիներ,

եզրույթների բազմազանությունը ներկայացվեր որոշակի տրամաբանությամբ ու կոնկրետ համատեքստում:

2. Տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի իրավական կարգավորման պատմատեսական զարգացման հիմնախնդիրները ներկայացնելիս ատենախոսը սկսում է այն ներկայացնել 19-րդ դարի սկզբից, այն դեպքում, երբ միջնադարյան Հայաստանին էլ հայտնի էին այս ինստիտուտի տարրեր պարունակող՝ պատասխանատվությունից ազատման հիմքեր:

3. Ատենախոսը «Հաշտեցման տեղը և դերը քրեական իրավունքում» վերտառությամբ պարագրաֆի առաջին նախադասությունում նշելով քրեական պատասխանատվության ենթարկելու մասին՝ 91-97-րդ էջերում ներկայացնում է պատժին վերաբերող մեկնաբանություններ, որոնք այդքան էլ փոխկապակցված չեն պարագրաֆի վերնագրի հետ, ինչպես նաև այդ հատվածում հղում է կատարվում ոչ պաշտոնական աղբյուրի՝ վիքիպեդիայի վրա, որը ատենախոսության համար հավաստի աղբյուր չի կարող լինել, այն էլ, երբ վիճակագրությունն անգամ համեմատությամբ չի ներկայացվում:

4. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածը ներկայացնելիս՝ ատենախոսը չի անդրադարձել նույն հոդվածի 4-րդ մասին, որով նախատեսվում է առանձնահատկություն ընտանիքում բռնության դեպքերով քրեական գործերի առնչությամբ: Իսկ այդ բացառությունը փաստացի արգելում է որոշ դեպքերում անձին ազատել քրեական պատասխանատվությունից տուժողի հետ հաշտվելու հիմքով:

Առկա են նաև տեխնիկական դիտարկումներ, որոնք միասնականացման անհրաժեշտություն են առաջացնում, մասնավորապես՝ ատենախոսությունում ՀՀ քրեական օրենսգիրքը ներկայացվում է «ՔՕ», «քր.օր.», «քրեական օրենսգիրք» տարբերակով, իսկ հոդվածները ներկայացվում են հետևյալ տարբերակներով՝ «հոդվ. 73», «2-րդ հոդված», «51 հոդված» և այլն:

Հետևություն. Նելլի Արմենի Աշրաֆյանի ատենախոսությունը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իրենից ներկայացնում է տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու տեսական և գործնական հիմնախնդիրներին վերաբերող համակարգված, համալիր և ավարտուն հետազոտություն, իսկ դրա հեղինակին արժանի է հրապարակ

աստիճանի շնորհման ԺԲ. 00-05 «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Նելլի Արմենի Աշրաֆյանի՝ «Քրեական պատասխանատվությունից ազատվելու տեսական և գործնական հիմնախնդիրները (տուժողի հետ հաշտվելու հիմքով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ոստիկանության փոխգնդապետ Հ.Մ.Խաչատրյանի կողմից: Քննարկվել և հավանության է արժանացել քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի 2021թ. հունվարի 22-ի նիստում, արձանագրություն № 9:

Ամբիոնի պետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ոստիկանության փոխգնդապետ Հ.Մ.Խաչատրյան

Հ.Խաչարյանի ստորագրությունը հավաստում եմ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի
Տեղակալ, ինքը և կադրերի և ԱՀՏԱ բաժնի պետ,
ոստիկանության գնդապետ Գ.Գ.Մալխասյան